

ИНСТРУКЦИЯ ПО МЕДИЦИНСКОМУ ПРИМЕНЕНИЮ ПРЕПАРАТА

КАПРОФЕР

Торговое название

Капрофер

Химическое название

Железа (III) хлорид 6-водное и ε-аминокапроновая кислота

Физико – химические свойства

Прозрачная жидкость темно-коричневого цвета с вяжущим, кисловатым вкусом, специфическим запахом.

Состав препарата

Каждый мл раствора содержит :

активные ингредиенты

- железа (III) хлорид 6-водное – 0.947г
- ε-аминокапроновая кислота – 0.024 г

Вспомогательные вещества

- Раствор натрия хлорида изотонического 0,9 % - 0.448 г

Лекарственная форма

Раствор для наружного применения

Фармакологическая группа

Гемостатическое средство для местного применения

Код АТХ

B02BC

Фармакологическое действие (фармакодинамика)

Фармакологическое действие - гемостатическое.

Комбинированный препарат, оказывает местное гемостатическое действие, наступающее непосредственно после его нанесения. При взаимодействии с кровью, образуется кровяной сгусток, плотно фиксирующийся на раневой поверхности, предупреждает повторное кровотечение и препятствует проникновению вторичной инфекции. Ускоряет регенерацию и послеоперационную эпителизацию раневой поверхности, образование грануляционной ткани. Обладает также противоотечным и противовоспалительным действием.

Фармакокинетика

Не проведено

Показания к применению

Кровотечения (при различных стоматологических вмешательствах, при лечении пульпитов, для остановки кровотечения из каналов зубов после экстирпации пульпы зуба), при хирургических вмешательствах на тканях пародонта для остановки кровотечения и снятия коллатеральных отеков мягких тканей в послеоперационном периоде.

Способ применения и дозы

Ватный тампон 0.5 x 0.5 см, пропитанный раствором, вводят в кровоточащую лунку. При этом должен образоваться кровяной сгусток. Образующийся темно – коричневого цвета, с черноватым оттенком кровяной сгусток имеет плотную упругую консистенцию. При стойких кровотечениях ватный тампон можно оставлять в лунке в течение суток. Тампон отторгается самостоятельно. В каналы зубов и зубодесневые карманы препарат вводят на 2 – 5 сек. с помощью турунд, после чего турунды удаляют.

Противопоказания

Гиперчувствительность к препарату.

Побочные действия

При частом применении временное окрашивание эмали зубов в темный цвет (исчезает после отмены).

Действие препарата при работах требующих повышенного внимания

Препарат не оказывает никакого действия на центральную нервную систему: можно применять при вождении транспортных средств, также при других работах, требующих повышенного внимания.

Применение во время беременности и кормления грудью

Нет данных о применении препарата при беременности и в период кормления грудью.

Взаимодействие с другими лекарственными препаратами

Не исследовано

Форма выпуска

Во флаконах-капельницах по 20 и 30 мл, в пачке 1 флакон

Условия хранения

В сухом, недоступном для детей, защищенном от света месте, при температуре до +25°C

Срок годности

3 года

Условия отпуска

Без рецепта врача

Производитель

Научно – технологический центр органической и фармацевтической химии НАН РА,
Институт тонкой органической химии им. А. Л. Мнджояна

Адрес производителя

РА, г. Ереван, пр. Азатутяна 26

Тел. (+374) 010 28-83-34

e-mail: nanraifoc54@mail.ru

www.stcopc.sci.am

ԿԱՊՐՈՖԵՐ
ԴԵՂԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ

Ապրանքային անվանումը

Կապրոֆեր

Քիմիական անվանումը

Երկաթի (III) քլորիդ 6 մոլեկուլ բյուրեղաջրով եւ ε – ամինակապրոաթթու

Ֆիզիկա- քիմիական հատկությունները

Մուգ շագանակագույն, յուրահաստուկ հոտով, տտպող, թթվաշ համով թափանցիկ հեղուկ

Բաղադրությունը

Լուծույթի յուրաքանչյուր մլ-ը պարունակում է .

Ակտիվ նյութեր

- Երկաթի (III) քլորիդ 6 մոլեկուլ բյուրեղաջրով - 0.947 գ
- ε – ամինակապրոաթթու-0.024 գ

Օժանդակ նյութեր

- նատրիումի քլորիդի իզոտոնիկ լուծույթ 0,9 % - 0.448 գ

Դեղաձևեր

Արտաքին կիրառման լուծույթ

Դեղաբանական խումբը

Տեղային կիրառման արնեկանգ (հեմոստատիկ) միջոց

ԱԲՔ ծածկագիրը

B02BC

Դեղաբանական ազդեցությունը (դեղադինամիկա)

Դեղաբանական ազդեցությունը՝ արնեկանգ (հեմոստատիկ)

Համակցված դեղ է, ցուցաբերում է տեղային արնեկանգ ազդեցություն, որը հասունանում է անմիջապես տեղային օգտագործումից հետո: Արյան հետ փոխազդելիս առաջանում է մակարդուկ, որը ֆիքսվելով վերքի մակերեսին՝ կանխում է կրկնակի արյունահոսությունը եւ երկրորդային ինֆեկցիաների ներթափանցումը: Խթանում է վերականգնողական (ռեգեներացիոն) պրոցեսը եւ վերքի մակերեսի հետվիրահատական էպիթելիզացիան, նպաստում է հատիկավոր (գրանուլյացիոն) հյուսվածքի ձևավորմանը: Օժտված է նաև հակաբորբոքային և հակաալտուցային ազդեցությամբ:

Դեղակինետիկան

Կատարված չէ

Կիրառման ցուցումները

Արյունահոսություններ (ատամնաբուժական տարբեր միջամտությունների, կակղանաբորբի (պուլպիտների) բուժման ժամանակ, ատամի կակղանի (պուլպայի) էքստիրպացիայից հետո արյունահոսության դադարեցման նպատակով), պարօդոնտի հյուսվածքի վիրաբուժական միջամտությունների ժամանակ արյունահոսությունը կանգնեցնելու նպատակով, ինչպես նաև հետվիրահատական շրջանում փափուկ հյուսվածքների կոլլատերալ ալտուցների վերացման նպատակով:

Կիրառման եղանակը եւ դեղաչափավորումը

0.5×0.5 սմ, դեղով թրջված բամբակյա խձուճը ներմուծում են արյունահոսող ատամնաբուն. պետք է ձևավորվի արյան մակարդուկ: Առաջացած՝ մուգ շագանակագույն, սև երանգով արյան մակարդուկը, ամուր և առաձգական կոնսիստենցիա ունի: Երկարատև արյունահոսությունների դեպքում բամբակյա խձուճը ատամնաբնում կարելի է թողնել մինչև 1 օր (բամբակյա խձուճը ինքնուրույն պոկվում է հյուսվածքից): Արմատախողովակներում և ատամի լնդագրպանիկներում դեղը ներմուծում են թղթե բույթերի օգնությամբ՝ 2 – 5 վայրկյանով, որից հետո վերջիններս հեռացնում են:

Հակացուցումներ

Գերզգայունություն դեղի հանդեպ:

Կողմնակի ազդեցություններ

Հաճախակի կիրառումից ատամների էմալի ժամանակավոր գունափոխում (շագանակագույն), որն անհետանում է կիրառումը դադարեցնելիս:

Ղեղի ազդեցությունը ուշադրություն պահանջող աշխատանքների ժամանակ

Որևէ ազդեցություն չի թողնում կենտրոնական նյարդային համակարգի վրա, կարելի է կիրառել ուշադրություն պահանջող աշխատանքների, ինչպես նաև տրանսպորտային միջոցներ վարելու ժամանակ:

Կիրառումը հղիության եւ կրծքով կերակրման շրջանում

Հղիության և կրծքով կերակրման շրջանում դեղի կիրառման վերաբերյալ տվյալներ չկան:

Փոխազդեցությունը այլ դեղերի հետ

Ուսումնասիրություններ չկան

Թողարկման ձևեր

20 և 30 մլ սրվակներ -կաթոցիկով, յուրաքանչյուր տուփում 1 սրվակ

Պահման պայմանները

Մութ, չոր, երեխաներին անհասանելի տեղում, մինչև +25°C ջերմաստիճանում

Պիտանիության ժամկետը

3 տարի

Բաց թողման պայմանները

Առանց բժշկի դեղատոմսի

Արտադրող

ՀՀ ԳԱԱ Օրգանական եւ դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի Ա. Լ. Մնջոյանի անվան Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ:

Արտադրողի հասցեն

ՀՀ, ք. Երևան, Ազատության պող. 26

Հեռ. (+374) 010 28-83-34

e-mail: nanraifoc54@mail.ru

www.stcopc.sci.am